

ԳՐԻԳՈՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԾ Է ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ՄԵՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱԿՈՐ ՀԻՒՊՏՈՍԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ



Գրիգոր Յովհաննիսեան

Հայաստանի Արտաքին Գործոց նախարարի խորհրդական Գրիգոր Յովհաննիսեանն նշանակուած է Լոս Անճելոսի մէջ Հայաստանի գլխաւոր հիւպատոսի պարտականութիւնները կատարող:

Արտաքին Գործոց նախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան հաղորդագրութեան համաձայն՝ Գրիգոր Յովհաննիսեան 38 տարեկան է, աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի արեւելագիտութեան ֆակուլտետը, միջազգային յարաբերութիւններու գծով մասնագիտացած է Պէյրութի Հայկազեան Համալսարանին ներս, Ֆլեթչըրի Իրաւունքի եւ դիւանագիտութեան դպրոցին ստացած է մագիստրոսի կոչում:

1994-2006 թուականներուն աշխատած է ՄԱԿ-ի համակարգէն ներս:

2006-2009 թուականներուն աշխատած է որպէս «Շուշի վերածնունդ» հիմնադրամի գործադիր տնօրէն եւ ԵՊՀ-ի արաբագիտութեան ամպիոնի դասախօս:

Լոս Անճելոսի մէջ Հայաստանի նախկին գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոեան ետ կանչուած է՝ աւարտած ըլլալով պաշտօնավարման ժամկէտը:

ՓԱՌԱՇՈՒՔ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ՝ ՍՏԵՓԱՆ ԱԼԱՃԱՃԵԱՆԻ ԾՆԴԵԱՆ 85.ԱՄԵԱԿԻՆ

Կազմակերպութեամբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Նոր Սերունդ Մշակութային Միութեան, Համազգային Կրթական եւ Մշակութային Ընկերակցութեան եւ Թէքէեան Մշակութային Միութեան՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի Գալայճեան սրահին մէջ, Կիրակի, 8 Փետրուար 2009, Կ.Ե. Ժամը 6:00.ին, տեղի ունեցաւ տաղանդաշատ եւ սիրուած արձակագիր՝ Ստեփան Ալաճաճեանի ծննդեան 85-ամեակին նուիրուած

ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՄԵԾ ՄԱՍԸ ԶԲԱՂԱԾ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԳՈՎԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ»

Լրագրողներու պաշտպանութեան միջազգային կոմիտէն Երեքշաբթի, Փետրուար 10-ին հրապարակեց «Մամուլի վրայ յարձակումներու մասին» 2008 թուականի գեկոյցը, որու Հայաստանին վերաբերող բաժինին մէջ ըսուած է, որ Փետրուար 19-ի «վիճալարոյց ընտրութիւններուն նախորդող, ինչպէս նաեւ յաջորդող ժամանակաշրջանին լրագրողներու վրայ յարձակումներու թիւը աճած է, իսկ լրատուամիջոցներու համար բնորոշ դարձած է ինքնազրաքննութիւնը»:

«Հանրապետութեան միապետ նախագահ Ռոբերդ Քոչարեանը կեղծիքներով անցած քուէարկութենէն յետոյ ընդդիմադիր ցուցարարներուն լուեցնելու նպատակով արտակարգ դրութիւն հաստատած է եւ արգելափակած է անկախ մամուլի աշխատանքը, որպէսզի ապահովէր իշխանութեան փոխանցումը իր յաջորդին՝ վարչապետ Սերժ Սարգսեանին», - ըսուած է գեկոյցին մէջ: - «Իշխանութիւններու նպատակն էր հասնել հոն, որ մամուլը բարենպաստ դիրքերէ լուսաբանէ Սարգսեանի քարոզարշաւը: Փետրուար 19-ի քուէարկութենէն առաջ՝ հետեւելով «Հ1»-ի օրինակին, հանրային եւ մասնաւոր մամուլի մեծ մասը գովաբանած է Սարգսեանին եւ քննադատած է ընդդիմութեան ղեկավար, 1991-1998 թուականներուն Հայաստանի առաջին յետխորհրդային նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին»:

Հայաստանի հանրային ռատիոն «դադրեցուցած է ամերիկեան կառավարութեան ֆինանսաւորմամբ գործող «Ազատութիւն» ռատիոկայանի վերահետարձակումը»: - «Միայն մայրաքաղաք Երեւանի եւ շարք մը քաղաքներու բնակիչներուն էր հասանելի տեղեկատուութեան այլընտրանքային այնպիսի միջոցը, ինչպիսին էր «Ա1+»-ի ինտերնետային կայքէջը»:

Լրագրողներու պաշտպանու-

թեան կոմիտէի հրապարակած գեկոյցին մէջ ըսուած է, որ «Սերժ Սարգսեան յաղթած է, սակայն համաեւրոպական իրաւապաշտպան կազմակերպութեան՝ ԵԱՀԿ-ի դիտորդները փաստած են, որ խախտումներով են գուզորդուած թէ՛ բուն քուէարկութիւնը եւ թէ՛ քուէներու հաշուարկը»: - «Երեւանի ընտրատեղամասերէն մէկուն մէջ՝ խախտումները արձանագրելու փորձի ժամանակ բռնութեան ենթարկուած եւ կողոպտուած են երկու լրագրող՝ Յովսէփ Յովսէփեան «Ա1+»-էն եւ Լուսինէ Բարսեղեան «Հայկական ժամանակ»-էն»:

«Տէր-Պետրոսեանի տասնեակ հազարաւոր աջակիցներ՝ խախտումներու մասին հաղորդագրութիւններէն վրդովուած, Երեւանի կեդրոնը խաղաղ ցոյցեր կազմակերպած են», - կը շարունակէ գեկոյցի հեղինակները: - «Մէջ



շաբթ տեւած ցոյցերէն յետոյ նախագահ Քոչարեան 20 օրով արտակարգ դրութիւն յայտարարած է՝ արգիլելով բոլոր հանրահաւաքներն ու անկախ լրատուութեան տարածումը: Տէր-Պետրոսեանը յայտնուած է փաստացի տնային կալանքի պայմաններուն մէջ»:

«Հարիւրաւոր ոստիկաններ

Շաբ.ը էջ 4

ԳՈՐԱՆ ԼԵՆՄԱՐԿԸՐ. «ՀԻՍԱ Է ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԳՏՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ»

Լեւոնային Ղարաբաղի հարցով Եւրոպայի Անվտանգութեան եւ Համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) խորհրդարանական վեհաժողովի յատուկ ներկայացուցիչ Գորան Լենմարկըր, որ տարածաշրջանային հերթական այցի շրջագիծէն ներս Երկուշաբթի, Փետրուար 9-ին ժամանած է Հայաստան եւ մեկնաբանելով իր՝ աւելի վաղ հնչեցուցած լաւատեսութիւնը մօտ ապագային Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման առումով, ըսած է. - «Հիմա է լուծումներ գտնելու ժամանակը»:

Պատասխանելով «Ազատութիւն» ռատիոկայանի հարցին՝ ան աւելցուցած է. - «Վրաստանի մէջ պատերազմական գործողութիւններէն յետոյ բոլորը քաջ կը գիտակցին, որ միայն խաղաղ ճանապարհով պէտք է խնդրին լուծում տրուի: Եւ ճիշդ այդ է լաւատես ըլլալու հիմնական պատճառներէն մէկը»:

Լենմարկըր նոյն օրը արդէն հանդիպած է Ազգային ժողովի



Գորան Լենմարկըր Երեւանի մէջ կը պատասխանէ լրագրողներու հարցերուն

նախագահ Յովիկ Աբրահամեանի, Արտաքին Գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանի, խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի նախագահ Արմէն Ռուստամեանի, խորհրդարանական ընդդիմութեան «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամներու, ինչպէս նաեւ արտախորհրդարանական ուժերու, մասնաւորապէս Հայ Ազգային Գոնկրէ-

Շաբ.ը էջ 4

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Յառաջիկայ Յունիս 7-ին տեղի պիտի ունենան Լիբանանի խորհրդարանական ընտրութիւնները: Այն լիբանանահայերը, որոնք կ'ուզեն մասնակցիլ այդ ընտրութիւններուն, կրնան հեռաձայնել Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան գրասենեակը՝ 626-398-0506 թիւին եւ ստանալ յաւելեալ մանրամասնութիւններ:

ՐԱՅԱՍՏԱՆ

ՊԱՇՏՊԱՆԸ ԳԼԽԱԲՈՐ ԴԱՏԱԽԱՋԻՆ. «ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԴԱՏԱԽԱՋՆԵՐԸ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՏԱԼԻՍ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻՆ»

Մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեանը ՀՀ գլխավոր դատախազին ուղղուած նամակում կրկին անդրադարձել է ոստիկանութեան համակարգում գործող ձեռքարկութեան պահանջներին: Մինչ այդ այդ խնդրով ՄԻՊ-ը գլխավոր դատախազութեանն է դիմել նաեւ Յունուարի 15-ին, ինչին ի պատասխան, գլխավոր դատախազութեան վարչութեան պետ Շ. Տիգրանեանը խնդրել է ստուգման նպատակով ՀՀ դատախազութիւն ներկայացնել ՄԻՊ-ի կողմից կատարուած ուսումնասիրութեամբ արձանագրուած կոնկրետ փաստեր, ինչպէս նաեւ քաղաքացիներից ստացուած այն դիմումները, որոնց մասին նշուել է չիշեալ գրութեան մէջ:



Մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեան

տի բաժնում, կոտայքի մարզային վարչութեան կոտայքի, Նախիբի բաժնիներում եւ այլն:

Ինչ վերաբերում է դատախազութեանը փաստեր տրամադրելուն, կամ քաղաքացիների դիմումները ներկայացնելուն, պարզաբանում եմ, որ գործող օրէնսդրութեան համաձայն, Պաշտպանը նման պարտաւորութիւն չունի որեւէ պետական մարմնի առջեւ»:

Դրանից զատ Պաշտպանը նշում է, որ «ՄԻՊ-ի մասին» օրէնքի համաձայն Պաշտպանը պարտաւոր է բացատրութիւններ տալ, այդ թւում՝ նաեւ որպէս վկայ, իր մօտ գտնուող բողոքի կամ փաստաթղթի էութեան վերաբերեալ, ինչպէս նաեւ իրաւունք չունի իրեն բողոքող անձանց մասին տուեալներ հրատարակել՝ առանց նրանց գրաւոր համաձայնութեան: Այդուհանդերձ, Ա. Յարութիւնեանն «աշխատանքի արդիւնաւէտութիւնից» ելնելով եւ «նախապէս ստանալով քաղաքացիների համաձայնութիւնը», նշել է, որ դատախազութիւնը իրեն հետաքրքրող ցանկացած փաստի կարող է ծանօթանալ ՄԻՊ աշխատակազմում:

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԴԵՍ Է ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԵՐԻՆ

«Ժառանգութիւն» կուսակցութիւնը դէմ է արտաքին պարտքի հաշուին Հայաստանի առջեւ ծառայած խնդիրները լուծելուն, մասնաւորապէս միջոցներ կարող է հայթայթել Հենց պետութեան ներսում: Այս մասին ասուլիսում յայտնեց «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Արմէն Մարտիրոսեանը: Ըստ նրա, Հայաստանն ունի այդ հնարաւորութիւնը. լուծել խնդիրները՝ հարկային դաշտ բերուելով խոշոր հարկատուներին ու ստուերային տնտեսութիւնը: Միաժամանակ նա կարծում է, որ մեծ վտանգ են ներկայացնում դրամի կուրսի պահպանման համար կենտրոնական բանկի պահուստային ֆոնդի դուրս բերուող գումարները. «Իսկ եթէ հետագայում Հայաստանին պաշտպանութեան նպատակներով պէտք լինեն, այդ պահուստային գումարները»:

արդանոց հարստութիւն է թողել», - նկատեց Աժ պատգամաւորն ու աւելցրեց, որ պրոգրեսիւ հարկման գաղափարը պէտք է տարածել նաեւ անշարժ սեփականութեան վրայ. սեփականութեան վերաբերեալ այս հարկումը կարելի է համարել պերճանքի կամ շքեղութեան միջոցները որոշակիօրէն սահամանափակելու եղանակ, կամ «տնտեսական համայնքում»:

Ասուլիսի վերջում «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Արմէն Մարտիրոսեանը կոչ արեց կառավարութեանը՝ «ուժային բռնութեան չենթարկել» կառավարութեան, եւ, ընդհանրապէս, որեւէ պետական մարմնի շէնքի առջեւ բողոքի ցոյց կազմակերպած քաղաքացիներին:

«Վերջին օրերի մի քանի իրադարձութիւնների հետ կապուած՝ մարդիկ յաճախ են ցանկանում արտայայտել իրենց դժգոհութիւնը: Այն մարդիկ, ովքեր իրենց սոցիալական բողոքն արտայայտելու համար գալիս են կառավարութեան, Ազգային ժողովի կամ պաշտօնական այլ մարմնի շէնքի մօտ, չպէտք է ենթարկուեն ուժային բռնութեան: Այդպիսի դէպքեր վերջերս եղել են. մարդիկ պէտք է հնարաւորութիւն ունենան ազատ ներկայացնելու, արտայայտելու իրենց բողոքը, իրենց դժգոհութիւնը», - ասուլիսում ասաց Արմէն Մարտիրոսեանը:

ՌԱԶՄԻԿ ԶՈՐՐԱԲԵԱՆ. «ՅԵՌՈՒՄՏԱԵԹԵՐԸ ՓԱԿ Է ԸՆԴՂԻՄԱԿԱՆ ԶԱՄԱՐ»

Աժ պատգամաւոր, իշխող Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբեանն Փետրուար 9-ին «Հայեացք» ակումբում յայտարարել է, թէ հեռուստաեթերը փակ է ընդդիմադիրների համար, ինչը լաւ է: Այդ մասին նա յայտարարել է այն բանից յետոյ, երբ լրագրողները հետաքրքրուել են Զոհրաբեանի մէկ այլ յայտարարութեամբ, թէ ինչու է իշխանական պատգամաւորը կարծում, թէ Մարտի 1-ի հանրահաւաքին սրացումներ չեն լինելու:



Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբեան

նր հեռուստաեթեր հրաւիրելը լաւ նախադէպ է եւ երկխօսութեան նման մի բան:

Նրան հարցրել են, թէ արդեօ՞ք ՀՀ-ում քննարկում է Ռոբերդ Քոչարեանի վերադարձի դէպքում իրենց անելիքը: Ռազմիկ Զոհրաբեանն ասել է, որ ԲՀ-ի մամուլի խօսակը հերքել է այդ լուրերը, ասելով, որ ոչ Ռոբերդ Քոչարեանն է պատրաստուած վերադառնալ, ոչ էլ Գաղիկ Ծառուկեանն է ցանկանում վարչապետ դառնալ: «Այս ամէնը մի քիչ հնարածին կամ հնարուած տեղեկատուութիւն են», - նշել է Աժ պատգամաւորն ու կարծիք յայտնել, որ ներկայ նախագահը, վարչապետն ու Աժ-ն «լրիւ բաւարարում են»:

ԵՐԵՒԱՆԻ ՄԻ ՍԱՍԸ ՎԵՐԱԾՈՒԵԼՈՒ Է ԲԻԶՆԵՍ-ԿԵՆՏՐՈՆԻ

«Կարելորագոյն խնդիրներից է կենտրոնի բեռնաթափումը միջազգային կազմակերպութիւններից: Այդ կազմակերպութիւններն իրենց տեղը տեսնում են Երեւանի փոքր կենտրոնում, հրաժարուելով մայրաքաղաքի այլ հատուածներում առաջարկուող տարածքներից»,- յայտարարել է Երեւանի գլխավոր ճարտարապետ Սամուէլ Դանիէլեանը:

Նրա խօսքերով, որոշում է ընդունուել մայրաքաղաքի Նորագիւղ թաղամասում միջազգային բիզնես-կենտրոն ստեղծել: Միջազգային կենտրոնի ստեղծման նախագիծը, որն իրականացուելու է մասնաւոր ներդրումների շնորհիւ, արդէն քննարկում է կա-

ռավարութեան կողմից: Ճարտարապետը յաւելել է, որ բիզնես-կենտրոնում տարածքներ են տրամադրուելու միջազգային կազմակերպութիւնների գրասենեակներին, դիւանագիտական առաքելութիւններին եւ բանկերին: «Մենք ցանկանում են, որ այդ տարածքում կենանք ամբողջ օրուայ ընթացքում եւ այլ իսկ պատճառով այնտեղ բացուելու են գուարձանքի վայրեր, ռեստորաններ, ինչպէս նաեւ մշակութային կենտրոններ», - յաւելել է նա: Բացի այդ, Նորագիւղի տարածքում ստեղծուելու է բնակելի շրջան, բնակարանային հարցերը լուծելու համար:

ՌՈՒՄԱՍԱՆԸ ՅԱՅԱՍԱՆԻՆ ԿԸ ՏՐԱՄԱԴՐԻ 500.0 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿ

Հայաստանի Հանրապետութեան եւ Ռուսաստանի Դաշնութեան կառավարութիւնների միջեւ տեղի ունեցած բանակցութիւնների արդիւնքում երկու երկրների միջեւ նախատրագրուել է «Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ Ռուսաստանի Դաշնութեան կառավարութեան միջեւ Հայաստանի Հանրապետութեանը պետական վարկ տրամադրելու մասին» համաձայնագիր: Համաձայն դրա՝ ռուսական կողմը Հայաստանի Հանրապետութեանը կը տրամադրի 500.0 մլն ԱՄՆ դոլարի պետական վարկ՝ ՀՀ տնտեսութեան վրայ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի

բացասական հետեւանքները չհզոքացնելու նպատակով: Վարկը տրամադրուելու է 15 տարի մարման ժամկէտով, որից 4 տարին արտօնեալ է: «Նախատրագրուած ֆինանսական համաձայնագիրը չի ենթադրում Հայաստանի Հանրապետութեան կողմից որեւէ այլ ոչ ֆինանսական պարտաւորութիւնների կատարում, եւ ներկայումս միջազգային ֆինանսական շուկայում ձեւաւորուած վարկաւորման պայմանների համեմատութեամբ վարկը տրամադրուելու է մեղմ պայմաններով», - ասուած է ՀՀ Ֆինանսների նախարարութեան հարուրդարութեան մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆ


ՄՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՊՈՒԱԾ Է ԿԵՂՈՑ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՅԵՐՏ

ՔՐԻՍՏԻՆԷ ԽԱՆՈՒՄԵԱՆ

Փոխտնտեսականապետ Գեորգ Մ՛հերեանի սպանությունից անցել է արդեն վեց օր, սակայն իրաւապահ մարմինները մինչեւ օրս պաշտօնապէս որեւէ վարկած չեն ներկայացրել:

Իսկ հետաքննութեան հարցում էլ ակնյայտ առաջընթաց կարծես չի նկատուում: Ազգային անվտանգութեան նախկին փոխնախարար, ՄԳՀԿ կենտրոնական գրասենեակի քաղաքական խորհրդատու Գուրգէն Եղիազարեանը մեզ հետ զրոյցում ներկայացրեց Մ՛հերեանի սպանութեան վարկածներից ու հնարաւոր պատճառներից մէկը:

«Քաղաքում լուրեր են պտտում այն մասին, որ Անձնագրերի եւ վիզաների վարչութիւնը «ամենակատարաբար» ճիւղերից մէկն է Հայաստանում՝ պղնձին, մոլիբդենին, նոյնիսկ ոսկուն համահաւասար բիզնես: Ըստ շրջանառու լուրերի, երկար ժամանակ է՝ վրաստանից տանակ հազարաւոր մարդիկ անձնագրեր են ստանում Հայաստանում՝ որոշակի լուրջ գումարների դիմաց: Այսինքն՝ նախկին յանցագործները, քրէական տարրերը, ծանր յանցագործութիւնների համար հետախուզուողները այսպիսով ազգափոխ են լինում եւ դառնում են հայ: Ասենք՝ Գոգոլաչվիլին դառնում է Գեորգեան, ՀՀ-ից ստանում է անձնագիր եւ մեկնում է Ռուսաստան: Ասում են՝ Ալվինա Ջաքարեանի օրօք շատ լուրջ գեղծարարութիւններ են կատարուել, եւ իշխանութիւնները գեղծարարի ձեռքը չեն բռնել մի պարզ պատճառով՝ որ այդ Գոգոլաչվիլիները, որ հայ են դարձել եւ ՀՀ անձնագիր են ստացել, յետոյ ցուցակներով դարձել են ընտրողներ»,- ասում է Եղիազարեանը եւ յիշեցնում, թէ ինչպէս էին ԱԺ եւ ապա՝ նախագահական ընտրութիւնների ժամանակ իշխանութիւնները տեղամասեր բերում տարբեր անձանց, ովքեր քուէարկում էին այդ գոյութիւն չունեցող հայերի փոխարէն: Եղիազարեանը նաեւ նշում է, որ ըստ որոշ լուրերի, «Գեորգ Մ՛հերեանը, լինելով երիտասարդ ու անփորձ եւ յայտնուելով այդ պաշտօնում՝ տեսել է, թէ ինչ է կատարուում, որի արդիւնքում էլ նա գնդակահարուել է: «Ամենայն հաւանականութեամբ, դուրս էր եկել շատ լուրջ գումարների վրայ, որոնք շորթուել են մինչեւ նրա գալը. ըստ ամենայնի, այդ գումարները կիսուել են մէկերկու հոգու միջեւ»,- նշեց Եղիազարեանը: Այս ամէնը հաշուի առնելով՝ վերջինս վստահ է, որ այս յանցագործութիւնը, ինչպէս եւ նախկինում կատարուած նման բազմաթիւ սպանութիւններ կամ չի բացայայտուել, կամ էլ՝ կը յայտնուել պատահական որեւէ մէկը եւ կը յայտարարի, թէ իբր՝ ինքն է սպանել Մ՛հերեանին՝ կենցաղային հողի վրայ: Եղիազարեանը իր այդ համոզմունքը բացատրում է նրանով, որ նման դէպքեր մենք արդէն ունեցել ենք: «Ի յայտ է գալիս «սպանութիւն կատարող» եւ իր վրայ է վերցնում յանցագործութիւնը, որը հաւանական է՝ ինքը



Գուրգէն Եղիազարեան

չի արել: Դրա սպասուած էլ այն է, որ երբ սպազորուեց յանցագործի ֆոտոտրբոսը, ՀԲԾ-ն յայտարարեց, թէ նման ֆոտոտրբոս ընդհանրապէս գոյութիւն չունի: Ֆոտոտրբոսը բարդացնում է իրենց գործը. եթէ այն նախապէս տպում են, ապա յետոյ դժուար կը լինի գտնել մի մարդու, որը կասի, թէ ես եմ արել, եւ այդ մարդը պէտք է այդ ֆոտոտրբոսի դիմագծերով լինի: Իսկ երբ չկայ ֆոտոտրբոս, ապա շատ աւելի հեշտ է ընտրել ցանկացած արտաքինով յանցագործի»,- ասում է Եղիազարեանը: Վերջինիս խօսքերով՝ այդ սպանութիւնը չի բացայայտուել նաեւ մէկ այլ պատճառով, քանի որ յանցագործութիւնը կատարուել է «աւազակապետութեան շրջանակներում», այսինքն՝ ներիշխանական խմորումների արդիւնքում: «Ոստիկանութեան միջին օղակում բաւականին լուրջ, հասուն մասնագէտներ կան, դեկավարներին ի նկատի չունեմ, մարդիկ կան, որ ի վիճակի են բացայայտել յանցագործութիւններ, բայց ոչ այն դէպքում, երբ յանցագործութիւնը կատարուել է «աւազակապետութեան շրջանակներում»,- այդ յանցագործութիւնների բացայայտումը ապագայ չունեն: Իսկ այն յանցագործութիւնները, որոնք դուրս են «աւազակապետութեան շրջանակներից», դրանց բացայայտումը հնարաւոր չէ միայն մի պարզ պատճառով՝ ոստիկանութիւնը իր ֆունկցիոնալ պարտականութիւնները չի կատարում: Ոստիկանութեան հիմնական ֆունկցիաներից են յանցագործութիւնների կանխարգելումը, բացայայտումը եւ հասարակական կարգի պահպանումը: Մեզ մօտ ոստիկանութիւնը զբաղուած է միմիայն ընդդիմադիր դաշտով»,- ասում է ԱԱ նախկին փոխնախարար եւ յիշեցնում՝ յանցագործութիւնների դէմ պայքարելու փոխարէն, ոստիկանները երկար տարիներ զբաղուած են ընդդիմութեան հետապնդումներով: Վերջին, ամենաթարմ օրինակն էլ, ըստ Եղիազարեանի, այն է, որ շուրջ մէկ ամիս է՝ քրէական հետախուզութեան աշխատակիցները, ընկած դռնէ դուռ, մարդկանց համոզում են չմասնակցել Մարտի 1-ի հանրահաւաքին:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ԱՏԱՆԱՅԻ ԶԱՐԴԵՐԻ ԶԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՏԱՐԵԼԻՑԸ

Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտը 2009 թ. Ապրիլի 20-21-ը կազմակերպում է միջազգային գիտաժողով՝ նուիրուած 1909թ. Ապրիլին Օսմանեան կայսրութեան Ատանայի նահանգում տեղի ունեցած հայկական կոտորածների հարիւրամեայ տարելիցին:

Գիտաժողովի ընթացքում գեկոյցներով հանդէս կը գան գիտաժողովի թեմայի հիմնախնդիրներով զբաղուող պատմաբան մասնագէտներ՝ Հայաստանից, Իտալիայից, Հունգարիայից, Աւստրիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից եւ Շուէդիայից:

Երեւանում կայանալիք երկօրեայ գիտաժողովի շրջանակներում բանախօսները հնարաւորութիւն կունենան ներկայացնելու գեկոյցումներ 1909թ. զարնանք տեղի ունեցած հայկական կոտորածների վերաբերել՝ հիմնականում անդրադառնալով կոտորածների զրգարատճառներին, հետեւանքներին, ինչպէս նաեւ դրանց միջազգային արձագանքներին:

1908թ. երիտթուրքական յեղաշրջումը բարեփոխումների որոշակի յոյսեր առաջացրեց կայսրութեան քրիստոնեայ փոքրամասնութիւնների շրջանում: Առաջացած ոգեւորութիւնը, մահմետականների եւ քրիստոնեաների իրաւահասարակութեան կոչերը, սակայն, մարեցին Ատանայի եւ նրա շրջակայքի հայ բնակչութեան դաժան կոտորածներից յետոյ: Այս կոտորածները վերահաստատեցին քրիստոնեայ ազգային փոքրամասնութիւնների՝ յատկապէս հայերի նկատմամբ օսմանեան իշխանութիւնների ունեցած աւանդական քաղաքականութիւնը:

Ատանայի 1909թ. կոտորածը դարձաւ Օսմանեան կայսրութեան՝



հայ բնակչութեան դէմ պետականօրէն կազմակերպած եւ իրագործած ցեղասպանական քաղաքականութեան խորհրդանշական նախերգանքը: Հայերի նկատմամբ ցեղասպանական գործողութիւններ իրականացուել էին նաեւ նախկինում. 1894-1896 թթ. համիդեան ջարդերի հետեւանքով բնաջնջուեցին եւ տեղահանուեցին շուրջ 300 հազար օսմանահայատակ հայեր:

Ատանայի 1909թ. ջարդերի ուսումնասիրութիւնը վեր է հանում մի շարք կարեւոր հիմնահարցեր՝ կապուած, մասնաւորապէս, ջարդերի հետաքննութեան, փոխհատուցման, ջարդերին թուրքական կանոնաւոր բանակի մասնակցութեան եւ այլ խնդիրների հետ:

1909թ. Ատանայի կոտորածները ազդարարեցին հայերի բնաջնջման լայնամասշտաբ քաղաքականութեան սկիզբը, որը շարունակուեց Առաջին աշխարհամարտի տարիներին ու դրանից յետոյ: Հայերի դէմ պետականօրէն ծրագրուած ու իրագործուած ցեղասպանական քաղաքականութեան արդիւնքում բնաջնջուեցին մօտ մէկ ու կէս միլիոն հայեր: Շուրջ 300 հազար հայ բռնազաղթուեցին իրենց հայրենի բնօրրանից:

Կազմակերպութեամբ՝
Նոր Սերունդ Մշակութային Միութեան
Դասախօսական երեկոյ
նուիրուած՝
Վիքթոր Համբարձումեանի
Ծննդեան 100-ամեակին
Դասախօս՝
Ճարտարագէտ Սահակ Թուրքեան
(PowerPoint presentation)
Տեղի կ'ունենայ
Որբաթ, Փետրուար 13, 2009
Երեկոյեան ժամը 8-ին
Կլէմտէյի Կեդրոնական Գրադարանին մէջ
222 East Harvard Street, Glendale
Մտադր ազատ Հիրասիրութիւն

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՕՊԱՍԱ ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ

Առանց այլեւայլի, կարելի է հաստատել որ Պարաք Օպամայի նոր իշխանութեան դիմագրաւելիք ամենէն լուրջ խնդիրը Չինաստանն է, որ հաւանականութիւնը ունի 21րդ դարը իր ազդեցութեամբ յատկանշելու: Ինչպէս Մաօ Ձէ Թոնկ կ'ըսէր.

«Աշխարհի 5 մարդոցմէ մէկը չինացի է»: Աշխարհի 6 միլիարդ բնակչութեան մէկ հինգերորդը չինացի է:

Այս ինչը կը վերաբերի բնակչութեան: Անդին կայ նաեւ Չինաստանի տնտեսութիւնը, որ ներկայիս Ամերիկայի տնտեսութեան կէսին կը հասնի: Նախատեսութիւնները այնպէս են որ 25-30 տարիէն, երկու տնտեսութիւնները իրարու հաւասար ըլլան: Այս տուեալներէն մեկնած, անվարան կարելի է հետեւեցնել որ չինացիներուն ուսելիքը, ապրելու վայրը, փոխադրամիջոցները, աշխատանքի եւ խաղափայլի ընտրութիւնները յստակօրէն պիտի ազդեն աշխարհի մնացեալ երկիրներու ուժային ապահովութեան, կլիմայական գոյալիճակին, եւ ընդհանրապէս մարդկութեան բարեկեցութեան:

Չինաստանի արտաքին քաղաքականութիւնը նուազ կարեւոր չէ: Ամերիկայի հետ գործակցող Չինաստան մը կրնայ արդէլ հանդիսանալ հիւլէական նիւթերու տարածման, ինչպէս նաեւ գէնքերու կանխարգելման, թափանցիկ եւ մատչելի վաճառականական եւ տնտեսական դրութեան մը հաստատման, ահաբեկչական գործողութիւններու կասեցման, բնական ուժի հայթայթումին, մթնոլորտային փոփոխութեան դիմադրելու ճիգերուն, եւ վերջապէս, համաշխարհային առողջապահական, հա-

կակչոին, արդէլք հանդիսանալով համաճարակային հիւանդութեանց:

Այս բոլորը եւ տակաւին շատ մը ուրիշ դրական երեւոյթներ անխուսափելիօրէն ակնկալելի կը մնան Ամերիկայի եւ Չինաստանի միջեւ անկեղծ գործակցութեան ծիրէն ներս: Ի՞նչ կրնայ պատահիլ հակառակ պարագային, այսինքն երբ Ամերիկա եւ Չինաստան իրարու հանդէպ ոչ-բարեկամական դիրքերու վրայ գտնուին: Այլ իսօքով, եթէ այս երկու երկիրները իրար հետ վարեն թշնամական քաղաքականութիւն: Այս պիտի եւ վատհօրէն յանգի աշխարհայնացման (globalization) ամենէն յուր արդիւնքներուն եւ այս ոչ միայն Ամերիկայի, այլ նաեւ անոր դաշնակիցներուն համար:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Պէտք չէ Ամերիկան ենթադրէ կամ երեւակայէ որ Չինաստանի հետ գործակցութիւնը անխուսափելի է, կամ պարտաւորիչ կողմերու համար: Այս պատճառաւ, Ուաշինկթըն պարտաւոր է նոր մօտեցում մը, նոր ռազմավարութիւն մը մշակել Չինաստանի նկատմամբ: Ի՞նչ կրնայ ըլլալ այս նոր մօտեցումը: Տարիներ առաջ, պաղ պատերազմի երկար տասնամեակներուն, Ամերիկան, իր գլխաւոր հակառակորդ, Ս. Միութեան նկատմամբ, որդեգրած էր սանձումի, կամ սահմանումի (containment) քաղաքականութիւն մը, որուն միջոցաւ այս երկու գերզոր տէրութիւնները իրարու ազդեցութեան գօտիները սահմանելու կ'առաջնորդէր: Ս. Միութեան փլուզումէն ետք, երբ Ամերիկա մնաց աշխարհի միակ գերզոր տէրութիւնը, այլ եւս պէտք չունեցաւ հետապնդելու սանձումի քաղաքականութիւն մը,

որ շատ աւելի սուղի նստաւ իր վրայ: Նախագահ Գլինթընի օրով նուազ եւ Պուշի օրով յատկապէս, Ամերիկայի արտաքին քաղաքականութիւնը յատկանշուեցաւ յարձակողական, մարտական տրամադրութիւններով, մանաւանդ կանխարգիլական միջամտութիւններով, որուն իբրեւ արդիւնք սկսան իրաքի եւ Աֆղանիստանի պատերազմական գործողութիւնները: Ի հարկէ, Ամերիկայի մտածողութեան վրայ լուրջ ազդեցութիւն ունեցաւ Նիւ Եորքի վրայ, Սեպտեմբեր 11ի պատահած ահաբեկչական յարձակումը, որը, ըստ անոր ծրագրող եւ գործադրող Ուսամա Պըն Լատընի, արդիւնք էր ամերիկեան շահագործող ներկայութեան, արաբական երկիրներէն ներս: Ներկայիս, յստակ չէ թէ իրաքի եւ Աֆղանիստանի պատերազմները կարելի էր կանխել, երբ նկատի առնենք անոնց տուն տուող հոգեբանական, ապահովական, եւ տնտեսական պատճառները:

Ներկայիս, Պարաք Օպամայի արտաքին քաղաքականութեան հիմնական հետապնդումը ըստ իրեն, ուժի ցուցադրութեան փոխարէն, պիտի հանդիսանայ դիւանագիտութիւնը, այսինքն իւրաքանչիւր կողմի հանդէպ յարգանքի եւ գործակցութեան մթնոլորտի մը մէջ, ստեղծուած հարցերու բարոք լուծում գտնելն է: Ուժի ցուցադրութիւնները, մանաւանդ այսօրուայ բարդ աշխարհի մէջ, շատ քիչ անգամ գոհացուցիչ արդիւնքներու կը հասնին: Աւելի լուրջ հարցեր կը ստեղծեն քան թէ կը լուծեն: Փաստը իրաքի, Աֆղանիստանի, Միջին Արեւելքի մէջ ստեղծուած եւ շարունակուող պատերազմներն են, որոնք գինուորական լուծում չեն կրնար գտնել:

Ուրեմն եթէ դիւանագիտութիւնն է օրուայ կարգախօսը, եւ սանձումը, գինուորական թէ տնտեսական, ակնկալուած արդիւնքներ-

ու չի կրնար առաջնորդել, ի՞նչ քաղաքականութիւն կարելի է մշակել Չինաստանի նկատմամբ: Նոր մշակուելիք քաղաքականութիւնը պէտք է յատկանշուի «ներառման», (integration) վարքագծով մը, որուն նպատակը կրնայ ըլլալ Չինաստանի վերածուծը համաշխարհայնացած աշխարհի մը կարեւոր սիւներէն մէկուն: Այս կարելի կրնայ դառնալ եթէ Չինաստան այնքան մը միտքած ըլլայ համաշխարհային գետնի վրայ, որ ինք համոզուի թէ ինքնամեկուսացումը, կամ ետ քաշուելը կրնայ վնասել իրեն, եւ կամ կ'առաջնորդէ հաստատուած դրութեան մը խանգարումին, փլուզումին: Այս իմաստով, Ամերիկա եւ Չինաստան պէտք ունին իրարու: Երկուքն ալ չեն ուզեր կամ կը խուսափին թայուանի համար պատերազմ մղելու, եւ կամ արկածախնդրութիւն մը ընելու իրանէն ներս, որ կրնայ քարկղի գիներու ժխտական ազդեցութիւն ունենալու: Որպէսզի Չինաստան կարենայ ապահովել տնտեսական աճ եւ ներքին քաղաքական ապահովութիւն, պէտք ունի Ամերիկայի շուկային, իր ապրանքներու արտածումին համար: Անդին, Ամերիկա պէտք ունի օգտուելու Չինաստանի դիզած տոլարային հարստութեան:

Յստակ է ուրեմն որ Ամերիկան, եւ իր դաշնակիցները, պարտաւոր են ընդունելու Չինաստանի բարձրացումը միջազգային թատերաբեմէն ներս: Այս կանխելը ներկայիս անկարելի կը թուի: Նաեւ, գինուորապէս, Չինական բանակը բաւական ետ կը մնայ ամերիկեան բանակէն:

Ամերիկա եւ Չինաստան պարտաւոր են շարունակելու բարձրաստիճան խորհրդակցութիւնները, եւ Պարաք Օպամա պէտք է զարգացնէ եւ գործադրէ այս ձեւը

Մարք էջ 7

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՐԱԺԵՇՏ Է

ԵՐՔԵՔ ՈՒԾ ՁԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

ՏԵՄՔ ԵՐՈՒ
BANKRUPTCY-Ի ՕՐԵՆՔՆԵՐԸ
ԿՕԳՆԵՆ ՁԵՁԻ, ՉԱՆԳԱՅԱՐԷՔ

JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: 626-432-7209

Nazareth V. Jansezian, Esq.

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԱՂԵՏԻ ՄՊԱՍԵԼԻՍ

ԼԵՒՌՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի մասին լրատվությունը բոլոր հնարաւոր ձեւերով թափուում է մարդկանց գլխին, եւ օրուայ հացը մի կերպ վաստակող հասարակ մարդն անընդհատ այն գիտակցութեան ճնշման ներքոյ է, թէ ճգնաժամն ամէնից առաջ հարուածելու է իրեն, հետեւաբար 2009 եւ ով գիտի, գուցէ առաջիկայ մի քանի տարին լինելու է հենց լինելը, գոյատեւման ժամանակահատուած: Հասարակ մարդն այդ գիտակցութեան ճնշման ներքոյ է ոչ թէ այն պատճառով, որ գիտի համաշխարհային տնտեսական ճգնաժամի էությունը, այլ, ճիշդ հակառակը՝ բացարձակապէս ոչինչ չգիտի դրա մասին, իսկ լրատուամիջոցները մէկը միւսից առաջ ընկնելով շտապում են յուսահատեցնելու աստիճան ահաբեկել, թէ ճգնաժամի առաջին գոհը եւ լինելու է իր եւ ընտանիքի գոյութիւնը մի կերպով պահպանող հենց հասարակ մարդը:

Ճգնաժամի ուրուականն աւելի ահասարսուռ է դառնում, երբ «նեղ մասնագէտները», երբեմն նաեւ լրագրողները, գիտունի եւ գաղտնի տեղեկացուածի ինքնագոհութեամբ տնտեսագիտական չոր մեկնութիւնների բնագաւառից անցնում են դէպի գեղարուեստական պատկերաւորութեան ոլորտ եւ ճգնաժամը համեմատում, օրինակ, Երկիր մոլորակի գլոբալ տաքացման կամ համաշխարհային քառսի հետ («Հայլուր», 29.01.09): Այսպիսով՝ հասարակ մարդը ճգնաժամի մասին կարծես թէ հնարաւոր չափով տեղեկացւում է (թէեւ իր արտը ցանող, իր անասունը պահող գեղջուկն այդպէս էլ չի հասկանում, թէ հեռաւոր ամերիկաներում եւ եւրոպաներում ծայր առած ֆինանսական ճգնաժամն ինչու կամ ինչպէս է ազդելու իր հողի բերքատուութեան, կով ու ոչխարի կաթնատուութեան վրայ, մանաւանդ որ ինքը, ամէն տեսակի ճգնաժամերին անտեղեկ, հազար տարի ապրել, հիմա էլ ապրելու է այդ կենցաղով): Սակայն երբ մեր լրատուամիջոցների ջանադրութեամբ ճգնաժամի ուրուականը գլոբալ տաքացման

սարսուզողու հեռանկարի համադրմամբ կենդանանում է, հասարակ մարդն իսկապէս անհանգստանում է՝ վտանգ կայ: Բայց ամբողջ խնդիրն այն է, թէ արդեօք հարկաւոր է հասարակ մարդուն պարբերաբար եւ հետեւողականօրէն ենթարկել ճգնաժամի վերաբերեալ լրատուական գրոհին, պէտք է նրա մէջ շարունակաբար խորացնել տագնապի սպասման զգացումը, որ ահագնանում է յատկապէս այն հանգամանքով, որ խօսքը մի քանի մասին է, որի ինչ լինելը շատերը, ինչպէս վերը նշեցինք, մի կարգին չգիտեն էլ:

Ժողովուրդն ասում է. «Սատանան աւելի սարսափելի չէ, քան իր անունը»: Այո, տնտեսական ճգնաժամի ուրուականն ահասարսուռ է նաեւ այն պատճառով, որ ո՛չ ֆինանսիստը, ո՛չ տնտեսագետը, ո՛չ լրագրողն առ այսօր մարդավարի դեռ չեն բացատրել, թէ ինչ է դա: Աւելին՝ փոխանակ մեկնաբանելու երեւոյթը՝ լրատուամիջոցներն իրենց հակասական տեղեկատուութեամբ յաճախ խորացնում են մարդկանց տարակուսանքն ու շփոթը: Օրինակը դարձեալ բերենք լրատուագաշտից: Կապի հայաստանեան օպերատորներից «Բիլլայնը» («Արմենտել») օրերս յայտարարեց, որ համաշխարհային ֆինանսական ճգնաժամով պայմանաւորուած՝ ընկերութիւնը 2009 թուականին ոլորտի զարգացման ուղղութեամբ որեւէ ներդրում չի անելու: Չանցած երկու-երեք օր՝ կապի մէկ ուրիշ օպերատոր՝ «ՎիվաՆետ-ՄՄՍՍ»-ը, յայտարարեց 2009 թուականին իր ներդրումները ոլորտում ոչ թէ սառեցնելու, այլ նոյնիսկ 50 տոկոսով աւելացնելու մասին (2008ի 60 մլն տոլարի դիմաց՝ 90 մլն - «Հայլուր»ի վերը նշուած օրուայ թողարկումը): Ի՞նչ է ստացւում, նոյն ճգնաժամը նոյն ոլորտի վրայ տրամագծօրէն հակառակ ազդեցութիւն է ունենալու: Ի՞նչ զարմանալի ճգնաժամ է:

Ճգնաժամի ազդեցութեան իր սեփական մեկնութիւնն ունի հայրենի կառավարութիւնը: Դեռ վերջերս նա պնդում էր, թէ ճգնաժամը Հայաստանի նման փոքր երկրների տնտեսութեան վրայ բացասաբար չի ազդի, նոյնիսկ բարերար

ազդեցութիւն կ'ունենայ: Այս հովուերգական ինքնօրօրը, սակայն, չիանգարեց մարդկանց կասկածելու հարագատ դեկավարութեան լատեսութեանը, մանաւանդ երբ իմացուեց, որ երկրի հանքարդիւնաբերութեան ոլորտում զանգուածային կրճատումներ են կատարուել, զրեթէ կաթուածահար վիճակում է աղամանաղագործութիւնը: Թէ չէ՝ զարմանալի բան էր ստացւում, աշխարհի լրատուամիջոցները միաբերան խօսում-գրում են ճգնամաժի ծանր հետեւանքների մասին, Դաւոսի համաշխարհային տնտեսական համաժողովում պետութիւնների առաջնորդները գերխնդրեր են համարում սպառնացող տնտեսական քառսից աշխարհը գերծ պահելն ու ճգնաժամի բացասական հետեւանքները մեղմելը, իսկ մենք անվրդով խօսում ենք մեր վիճակի իւրօրինակութիւնից ու բացատրելութիւնից: Խօսում, բայց դարձեալ չենք մոռանում հասարակ մարդուն պարբերաբար ահաբեկել:

Միջազգային ճգնաժամի տնտեսական վիթխարի վնասների կանխատեսումները եւ հաշուարկները վաղուց սկսուել են, եւ այս առումով արդէն բաւականականաչափ նիւթ կայ: Մինչդեռ անյայտանհաշուելի է ճգնաժամի բերած հոգեբանական աւերածութեան չափը: Աւելին՝ եթէ մարդկութիւնը լծուել է աշխարհը տնտեսական

քառսից փրկելու գործին, նոյն աշխարհն իր տեղեկատուական հզոր միջոցներով կարծես լծուած է բոլորովին այլ գործի՝ հասարակ մարդկանց դէմ սկսուած հոգեբանական հալածանքը սաստկացնելուն, հոգեբանօրէն խեղելուն, ճգնաժամի անխուսափելի գոհը դառնալու նրանց սպասումը հիւանդագին կերպով խորացնելուն:

Վերստին յիշենք սատանայի ու նրա անուան մասին ասացուածքը եւ հասարակ մի հարց տանք մեր ու օտար «ճգնաժամագէտներին»՝ ինչո՞ւ մարդկանց մատչելի լեզուով չի բացատրուում, թէ նախ «որտեղից» յանկարծ ծագեց այդ ընդհանուր աղէտը մեծ», ինչպէ՞ս եւ ինչքանո՞վ է վտանգաւոր: Վերջապէս՝ ամենակարեւորը ինչո՞ւ չի բացատրուում, թէ ում եւ ինչու է հարկաւոր հասարակ մարդկանց ենթարկել տեւական հոգեբանական ճնշման, պահել անգիտութեան ու անորոշութեան ծնած մշտական վախի ու մոռալ սպառնալի սպասման մէջ:

Եւ այսպէս, սպասում ենք: Սպասում ենք աղէտի: Ասում են՝ այն արդէն եկել է, բայց շուտով առաւել աւերմունքով ու առաւել կործանարար է գալու: Յամենայն դէպս, դա են ներշնչում ճգնաժամի գծով նախանձելի համերաշխ ու մէկը միւսից քաջատեղեկ լրատուամիջոցները:

ՕՊԱՍԱ ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆ

Շարունակուած էջ 6-էն

իրարու հետ հարցերու լուծման համար: Չինաստան պէտք է մաս կազմէ այն խումբին, «G-8» ճանչցուած, որ միաւորումն է ճարտարարուեստական զարգացած երկիրներու: Եւ ոչ միայն այս: Այլ հոն ուր կարեւոր միջազգային կազմակերպութիւններ կը գտնեն,

կեանքի բոլոր մարզերէն ներս: Նոյնիսկ եթէ Ամերիկա եւ Չինաստան դաշնակիցներ չդառնան, կարող են զարգացնել հասկցող եւ հանդուրժող փոխ-չարաբերութիւններ, որոնք անպայման պիտի նպաստեն համաշխարհային խաղաղութեան եւ ազդերու միջեւ բարեկամական կապերու հաստատման:



ՀԱՅՐԱՍՈՎԷ

Կազմակերպութիւն 2 արարող
Հեղինակ՝ ԹԵՅ ԳՈՒՆԻ
Բեմադրիչ՝ ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ

ԿԻՐԱԿ, ՓԵՏՐՈՒՄ 15 - ԿԱԼԿ - ԺԱՐԸ 5:00-ին, \$50

Շաբաթ, Փետրուար 7, 21, 28 - Ժամը 8:00-ին
Կիրակի, Փետրուար 8, 22, - Ժամը 6:00-ին
Շաբաթ, Մարտ 7, 14 - Ժամը 8:00-ին
Կիրակի, Մարտ 1, 8, 15 - Ժամը 6:00-ին

ՄՈՒՏԱՔԻ ՆՈՒԷՐ \$20

Հ.Բ.Ը.Մ. Մամուկեան Կեդրոնի Մշակութային Համուկը
2495 E. Mountain Street, Pasadena

Տոմարը կարելի է սպանալ
• Հ.Բ.Ը.Մ. Գրասենեակ 626-794-7942
• Այլի Գրասենեակ 818-243-4112 • Պերճ Գրասենեակ 818-244-3830
• Հ.Բ.Ը.Մ. Մամուկեան-Տեմիքեան Վարժարան 818-883-2428

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՁ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA ՀԵՌԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

Մարտ 8-ի ելոյթը կը հովանաւորէ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը 818-391-7938

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ GLENDALE ADVENTIST ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆՈՐ ԲԱԺՆԻՆ ԲԱՑՈՒՄԸ

ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆՏԸ 2008Ի ԸՆԹԱՑՔԻՆ \$36 ՄԻԼԻՈՆ ՆՊԱՍՏ ՀԱՅԹԱՅԹԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ



Կլեմտեյլ էտվենթիստ Հիւանդանոցի Տնօրէն Մօրի Տիմ եւ Յովնան Արք. Տէրտէրեան

Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան իր սերտ կապը կը պահպանէ շրջանիս նշանաւոր հիւանդանոցներուն, անոնց պատասխանատուններուն եւ Հոգեւոր Հովիւներուն հետ եւ այցելութեամբ կ'աղօթէ հիւանդներուն վրայ: Արդարեւ, Կլէմտեյլ էտվենթիստ Հիւանդանոցին մէջ յաճախ կ'ունենանք հայ հիւանդներ, ունինք նաեւ հայ բժիշկներ, որոնք լաւագոյնս օգտակար կը հանդիսանան բոլոր հիւանդներուն:

Հիւանդանոցը աւարտած ըլլալով գործողութիւններու նոր բաժինը, հրաւիրած էր Առաջնորդ Սրբազան Հայրը, որպէսզի իր օրհնութեամբ եւ արթթբով պաշտօնական բացումը կատարէր:

Սրբազան Հայրը ուղեկցութեամբ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի, Թեմական Խորհուրդի Ատենապետ՝ Իրաւաբան Ժողջֆ Կանիմեանի, Արք. Տ. Վազգէն Քհնյ. Մովսէսեանի, Արք. Տ. Խաթակ Քհնյ. Շահպատեանի, Արմէն Համբարի, Գրիգոր Փաթարեանի, Տոքթ. Ռաֆֆի Պալեանի, Առաջնորդարանի Վարիչ Տնօրէն՝ Բրշ. Յարութ Սրկ. Մարգարեանի, Ռաֆֆի Քենտրոնեանի, Տիկին Արաքսի Պոլամեանի եւ Տիկին Սիրվա Քաչիկեանի, Մաշտոց Զօպանեանի եւ էտ Լաֆեանի, Ուրբաթ, Փետրուար 6ի առաւօտեան ժամը 10:00ին ժամանեցին հիւանդանոց եւ սիրալիր կերպով դիմաւորուեցան հիւանդանոցի վարչական մարմնի կողմէ:

Հիւանդանոցի Տնօրէն Մօրի Տիմ իր բարի գալստեան խօսքը ուղղեց ներկայ հիւրերուն: Նոյնպէս բարի գալուտի եւ ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Տոքթ. Սիմոն Քէօշկէրեան եւ Բուժքոյր Լուա Ալթիս: Սրբազան Հայրը եւ իր պատուիրակութիւնը ծանօթացուցին Ռաֆֆի Քենտրոնեան եւ Թեմական Խոր-

հուրդի Ատենապետ՝ Իրաւաբան Ժողջֆ Կանիմեան, որոնք նոյնպէս իրենց սրտի խօսքը փոխանցեցին ներկայներուն:

Սրբազան Հայրը հոգեւորականներու մասնակցութեամբ կատարեց Օրհնութեան Արարողութիւնը: Միանաբար երգուեցաւ «Գովեա Երուսաղէմ» շարականը: Աւետարանի ընթերցումը կատարեց Արք. Տ. Վազգէն Քհնյ. Մովսէսեան: Իսկ Սրբազան Հայրը կարգաց պատշաճ արթթբ մը, հայցելով Աստուծոյ օրհնութիւնը հիւանդանոցի նորակառուց բաժնին, բժիշկներուն, բուժքոյրերուն եւ բոլոր պատասխանատուններուն համար, որպէսզի Տիրոջ օգնութեամբ շարունակեն իրենց մարդասիրական եւ բժշկական հոգատարութիւնը բոլոր հիւանդներուն:

Փակման խօսքը կատարեցին Գալիֆորնիայի Խորհրդարանի Անդամ՝ Փօլ Գրիգորեան եւ Հիւանդանոցի Տնօրէն Մօրի Տիմ, որոնք իրենց երախտագիտութիւնը յայտնեցին Սրբազան Հօր՝ իր այցելութեան եւ կատարած օրհնութեան համար: Ապա, Լուա Ալթիսի առաջնորդութեամբ Սրբազան Հայրն ու իր պատուիրակութիւնը շրջապատեցան նորակառուց բաժինը, որ իր բոլոր յարմարութիւններով լաւագոյնս պիտի ծառայէ գործողութեան ենթակառուց հիւանդներուն:

Օրհնութեան Արարողութեան աւարտին, Սրբազան Հայրն ու Արք. Տ. Վազգէն Քհնյ. Մովսէսեան Հիւանդանոցի Տնօրէն Մօրի Տիմի առաջնորդութեամբ այցելեցին հիւանդանոցի մի քանի սենեակները եւ արթթեցին հիւանդներուն վրայ՝ շուտափոյթ ապաքինում մաղթելով անոնց:

Յայտագրի աւարտին տեղի ունեցաւ ընկերային ջերմ մթնոլորտ եւ հիւրասիրութիւն:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ՝ ՍՐԲՈՑ ԿԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ ՏՕՆԻՆ ՕՐԸ

Հինգշաբթի, Փետրուար 19ին, երեկոյեան ժամը 6:30ին Պըրպէնքի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ՝ Առաջնորդարան, Թեմակալ Առաջնորդ, Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի հանդիսապետութեամբ:

Պիտի Պատարագ եւ քարոզէ Սանթա Գլարիթայի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արք. Տ. Ներսէս Քհնյ. Հայրապետեան: Արարողութեան պիտի մասնակցին Լոս Անճելըսի շրջանի Թեմիս հոգեւորականները:

Հաւատացեալները նոյնպէս կը հրաւիրուին եկեղեցի՝ միանաբար տօնախմբելու Սրբոց Վարդանանց Զօրավարաց յիշատակը:

ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ ՍՏԵՓԱՆ ԱԼԱՃԱՃԵԱՆԻ ԾՆԴԵԱՆ 85-ԱՄԵԱԿԻՆ

Շարունակուած էջ 1-էն

տութեան նոր նշանակեալ Գլխաւոր Հիւպատոս՝ Գրիգոր Յովհաննէսեան:

Տեսաերիզի վրայ արձանագրուած սիւլուքահայ Ալաճաճեանի անձին, գրողին, վաստակին ու մեծ հայրենասէրին մասին խորը գնահատական վկայութիւններ բերին Սիրվա Կապուտիկեան, Ակադեմիկոսներ՝ Լեւոն Հախվերտեան, Եղուարդ Զրբաշեան եւ Սեւակ Արզումանեան:

Նունէ Աւետիսեան գեղարուեստական ընթերցումը կատարեց Յոբելեարի 1965, Ապրիլ 25-ին ունեցած իմաստասիրական ելոյթին, ուր ան կը բնորոշէր հայ կոչուելու եւ ապրելու նախապայմանը, որ էր ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ:

Գործադրուեցաւ օրուան հանդիսութեան պատշաճ գեղարուեստական յայտագիր: Ելոյթ ունեցան պարուսոյց Լիլիա Մարգարեանի «Լիլիա Պարախումբ»ը, մենակատարութեամբ Յոբելեարի թոռներ՝ Միմի Հայրապետեանի, Լորի Հայրապետեանի եւ Մելին Ալաճաճեանի:

նի: Նաեւ, ելոյթ ունեցաւ ծանօթ խմբաւար Միքայէլ Աւետիսեանի խմբաւարութեամբ՝ «Իրանահայ Միութեան Երգչախումբ»ը, դաշնակի նուագակցութեամբ Սամուէլ Աղտայեանի:

Առաջնորդական Փոխանորդ Տէր Տաճատ Մ. Վրդ. Եարտըմեան, իր ողջոյնի ելոյթին եւ Առաջնորդ Հօր պատգամի փոխանցումէն ետք՝ բեմ հրաւիրեց Վաչէ Արք. Յովսէփեանը, որ Յոբելեար Ստեփան Ալաճաճեանի լամբակը զարդարեց յիշատակի շքանշանով մը:

Յոբելեարի շնորհալի թոռնուհին՝ Միմի Հայրապետեան կարգաց գրող Ստեփան Ալաճաճեանի շնորհակալութեան խօսքը, ուղղուած բոլոր անոնց, որոնք իրականացուցին ներկայ հանդիսութիւնը, մաս կազմեցին օրուան յայտագրին եւ որպէս «եղեգ» խոնարհեցաւ ներկայ, տակաւ յորդող բազմահարկը հանդիսատեսներու առջեւ:

Ներհուն, մեծ եւ խոնարհ՝ ահա՛ օրուան Մեծարեալը՝ Ստեփան Ալաճաճեան: (Մանրամասնութիւնները յաջորդիւ)

ԲԱՑՈՒԱԾ Է


**Հիպնոսաքուժութեան կեդրոն
դեկավարութեամբ՝
Փորձառու բժիշկ Արթին Սադրեանի
Փասստիմայի մէջ**

**Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ
կ.ե. ժամը 3:00**


**Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E
Pasadena CA 91104**

Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Քայքայիչքայքիք բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցաներ:
Ինքնաշարժի վնասի ենթակառուցով պատուհած
վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

Massis Weekly

Volume 29, No. 04

Saturday, FEBRUARY 14, 2009

Armenian Opposition Schedules Rally on March 1 Anniversary

YEREVAN -- The Armenian opposition officially confirmed Monday its intention to rally supporters on March 1 on the first anniversary of the deadly post-election clashes in Yerevan.

According to a leading member of the Armenian National Congress (HAK), David Shahnazarian, the rally in the city center will be followed by a march to the site of the clashes that left ten people dead and more than 100 others wounded. He said the opposition alliance sent a relevant notification to the Yerevan mayor's office in accordance with Armenia's law on street gatherings.

Under that law, the municipality has three days to accept or reject the application. It banned virtually all of the street protests staged by the opposition in the summer and fall of last year. The protests went ahead despite that, with police making no attempts to disperse thousands of people attending them.

Speaking to RFE/RL, Shahnazarian said the HAK is ready to defy another government ban. "The rally will take place regardless of whether or not the authorities allow it," he said. Failure to sanction the first opposition rally in more than four months would lay "the groundwork for instability," he warned.

"If the authorities permit the rally

Armenian Opposition Leader Visits Russia

MOSCOW -- A top associate of opposition leader Levon Ter-Petrosian visited Moscow this week to discuss the political situation in Armenia with Russian government officials, a leading Russian newspaper reported on Wednesday.

According to the mass-circulation daily "Komsomolskaya Pravda," Levon Zurabian, a senior member of Ter-Petrosian's Armenian National Congress (HAK) alliance, met with unnamed "representatives of Russian power structures" during the two-day trip.

The paper said the talks focused on lingering political tensions in Armenia and, in particular, the HAK's plans to hold a rally on the first anniversary of the March 1 post-election clashes in Yerevan. "Zurabian presented the HAK's position in detail," it said. "The parties noted the importance and productivity of such meetings and decided to

French Journal Devotes Section to Armenia

PARIS -- *Politique Internationale*, a Paris-based journal, has devoted over 100 pages of its latest issue to Armenia. The section devoted to Armenia begins with an article by Serzh Sarkisian it also includes an interview with the foreign minister of Armenia Edward Nalbandyan.

The French member of parliament Francois Rochebloine tells about the rich Armenian and French relations. The journal published *The Trump Card of the Diaspora* by the historian Marcel Leart, *Turkey: Deadlock of Negation* by Yves Ternon, and *The Armenian Thought between the East and the West* by the Italian scholar Valentina Calzolari. An article by Vahagn Grigoryan tells about the transition economy of Armenia, prospects of economic stability and development.

The journal also includes the introduction of the book *The Past Days* by Charles Aznavour.



David Shahnazarian

and the march, they will have taken a prudent step," said Shahnazarian. "Or else, the authorities will prove that they themselves seek instability."

The HAK's top leader, Levon Ter-Petrosian, suspended his year-long campaign of anti-government protests in October, saying further opposition pressure on President Serzh Sarkisian could force the latter to make more concessions to Azerbaijan in the Nagorno-Karabakh conflict. Ter-Petrosian has reportedly begun consultations with opposition parties aligned to the HAK on whether the March 1 rally should mark the start of a new opposition push for power.

Shahnazarian reiterated opposition claims that the Armenian police have been visiting HAK activists across the country and warning them not to attend the upcoming Ter-Petrosian rally.



Levon Zurabian

hold more such bilateral consultations in the future."

Zurabian accompanied Ter-Petrosian during the latter's confidential trip Moscow in the run-up to Armenia's February 2008 presidential election. Opposition sources said at the time that Ter-Petrosian met with Dmitry Medvedev, who subsequently succeeded Vladimir Putin as president of Russia.

Armenia, Turkey 'Getting Closer' To Diplomatic Ties

MUNICH -- The foreign ministers of Armenia and Turkey reported further progress towards the normalization of bilateral relations after weekend talks in Munich that also involved President Serzh Sarkisian.

Eduard Nalbandian and Ali Babacan met in the southern German city on the sidelines of an international security conference for the second time in just over a week. Babacan also had a separate conversation there with Sarkisian, who headed the Armenian delegation at the annual high-level forum.

"You know that after the [29 January] meeting between the Armenian president and the Turkish prime minister in Davos, the foreign ministers were instructed to make additional efforts to normalize relations," Nalbandian told journalists after the talks.

"I and Mr. Babacan met for that purpose," he said in remarks broadcast by the Armenian Second TV Channel on Saturday. "The meeting was constructive. We are moving forward and getting closer to the normalization of relations."

"We made progress in talks on how to normalize relations," Babacan said on Sunday, according to the Anatolia news agency.

A spokesman for the Turkish Foreign Ministry likewise described the talks as "quite productive." "These talks aim at normalizing the relations between Turkey and Armenia," the official, Burak Ozugergin, was quoted by Anatolia as saying.

Sarkisian met Turkish Prime Minister Recep Tayyip Erdogan in the Swiss resort town after months of unprecedented Turkish-Armenian diplomatic contacts that have raised hopes



Eduard Nalbandian and Ali Babacan

for the establishment of diplomatic relations and the opening of the border between the two neighboring states. Neither Nalbandian, nor Babacan said in Munich just when that could happen.

Babacan discussed one of the main obstacles to the Turkish-Armenian rapprochement, the unresolved Nagorno-Karabakh conflict, with Azerbaijan's President Ilham Aliiev and Foreign Minister Elmar Mammadyarov during a visit to Baku on Monday. "The Nagorno-Karabakh conflict must be resolved solely within the framework of Azerbaijan's territorial integrity," the Turkish minister told reporters in Baku, according to the Trend news agency.

Babacan and official Azerbaijani sources did not say if the Turkish-Armenian dialogue was on the agenda of the talks. There have been some indications that Ankara is ready to stop linking the normalization of its strained relations with Yerevan with a Karabakh settlement acceptable to Baku. Azerbaijani politicians and pundits have expressed concern at such prospect.

OSCE Envoy Sees 'Good Possibility' for Karabakh Peace

YEREVAN -- An envoy from the Organization for Security and Cooperation in Europe has spoken of a "good possibility" of resolving the Nagorno-Karabakh conflict this year ahead of his upcoming fact-finding visit to the South Caucasus.

